

ՄԽԻԹԱՐԸ ՈՒ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆԻ ՏԵՍԱԴԱՇՏՈՒՄ

Մխիթար Սեբաստացու եւ ընդհանրապէս Մխիթարեանների ծաւալած գործունէութեան վերաբերեալ ուսումնասիրութիւնն արդէն ունի ուղիղ հարիւր վախճուն տարուայ պատմութիւն՝ սկսած Հ. Գաբրիէլ Այվազովսկու՝ 1857ին Փարիզում հրատարակած «Ուրուագիծ ոգւոյ եւ ընթացից Մխիթարեան միաբանութեան վեցետկոյ» գրքից, որ, ինչպէս յայտնի է, նա գրել է եղբօր՝ Յովհաննէս Այվազովսկու խորհրդով, երբ հեռացել էր միաբանութիւնից¹: Այդ ժամանակաշրջանում ստեղծուել է մի պատկառելի գրականութիւն: Հ. Գ. Այվազովսկուց յետոյ Մխիթարին ու Մխիթարեաններին մեզանում շատերն են անդրադարձել՝ նշանաւոր հայագէտներ, բանասէրներ եւ ընդհանրապէս մտաւորականներ, որոնց հրապարակումներում յաճախ կարելի է հանդիպել իրարամերժ կարծիքների ու դատումների, տարաձայնութիւնների ու հակասութիւնների, որոնք որքան էլ թէեւ, ճիշտ է, յաճախ չփոթութիւն են ստեղծում, իսկ մի մասն էլ անգամ անընդունելի է, սակայն այդ բոլորը հետաքրքիր են թեմայի ուսումնասիրման պատմութեան տեսակէտից:

Եղած հրապարակումների, գնահատականների շարքում էական տեղ են զբաղեցնում այն դիտարկումները, որակումները, որոնք թէ՛ միաբանութեան հիմնադրի եւ թէ՛ միաբանութեան գործունէութեան առնչութեամբ տուել է մեծանուն գիտնական Արշակ Զօպանեանը՝ հետաքրքիր մի նոր էջ բացելով թեմայի ուսումնասիրման պատմութեան մէջ: Այսօր էլ՝ միաբանութեան գործունէութեան 300ամեայ յոբելինական տարեդարձին, նրա գնահատականները ունեն ե՛ւ պատմական արժէք, ե՛ւ էական նշանակութիւն միաբանութեան գործունէութեան գիտական գը-

¹ Ա.ՍՈՅԵԱՆ, Թ., Մխիթարեանների գործունէութիւնը հայ հասարակական մտքի գնահատմամբ, Ի Պատմաքաղաքական համդէս, 2016, թիւ 3, 12:

նահատման առումով: Հանգամանօրէն անդրադառնալով Մխիթար Սեբաստացու եւ ընդհանրապէս Մխիթարեանների գործունէութեան՝ Ա. Չօպանեանը գնահատել է նրանց դերը թէ՛ իրենց ժամանակի եւ թէ՛ ազգային հեռանկարի տեսանկիւնից եւ դա արել է մի այնպիսի խորաթափանցութեամբ եւ հանճարեղութեամբ, որքան մեծ ու գեղեցիկ էր վերջիններիս Գործը:

Ներկայացնելով Ա. Չօպանեանի գնահատականները Սեբաստացու եւ միաբանութեան վերաբերեալ՝ մենք փորձել ենք գրականագէտի դատողութիւնները քննութեան առնել ոչ թէ ինքնամփոփ եւ ինքնաբաւ ձեւով, այլ թեմայի ուսումնասիրութեան տեսադաշտի վրայ, անհրաժեշտ զուգահեռներով ու զուգորդումներով՝ մասնաւորապէս Չօպանեանի որակումները համեմատելով նախորդ ուսումնասիրողներից՝ Հ. Գաբրիէլ Այվազովսկու, Միքայէլ Նալբանդեանի՝ նոյն հարցերի առնչութեամբ Մխիթարեաններին տուած գնահատականներին հետ:

Մխիթար Սեբաստացու կեանքի ու գործունէութեան հետազոտութեանն է նուիրուած Ա. Չօպանեանի «Մխիթար» վերատառութեամբ ուսումնասիրութիւնը՝ տպագրուած 1901ին «Անահիտում»: Առաջնակարգ տեղ յատկացնելով Մխիթար Սեբաստացուն մեր ժողովրդի ազգային ոգու, բարոյական ուժի նորոգման ու հզօրացման գործում, այն էլ իր օրերի ազգային վհատութեան եւ տգիտութեան մի այնպիսի շրջանում, երբ մահմեդական բռնապետութիւնը քաղաքական անկախութիւնը կործանելուց յետոյ սպառնում էր ոչնչացնել նաեւ մեր ժողովրդի հոգեւոր եւ մտաւորական կենսունակութիւնը՝ Չօպանեանը իրաւացիօրէն քննադատում է նրա՝ կաթոլիկութիւն ընդունելու փաստի մէջ շատերի՝ «ազգադաւ» իմաստ փնտռելու մտայնութիւնը՝ համոզուած, որ «Մխիթար, կաթոլիկ դաւանամբին յարած, բայց սրտով միշտ Հայ»² է մնացել, եւ յետոյ «իւր ազգին քարճարացման այդպէսով աւելի օգտակար ըլլալու համոզումն է որ Մխիթարը մղած է կաթոլիկութիւնն ընդունելու...»³: Հարցի կապակցութեամբ ուշադրաւ է Լէոյի վերաբերմունքը, որ նոյնանում է Չօպանեանի դիրքորոշման հետ: Մխիթարին համարելով կաթոլիկ՝ Լէոն միաժամանակ գտնում է, որ դա յանցանք է՝ չէ՞ որ դրանով հանդերձ կարելի է լինել նաեւ լաւ հայ⁴: Իսկ Հ. Գաբրիէլ Այվա-

2 ՉՕՊԱՆԵԱՆ, Ա., *Մխիթար*, Ի Անահիտ, Փարիզ 1901, քիւ 10-11, 250:

3 Անդ, 252:

4 ԱՍՈՆԵԱՆ, Թ., *Մխիթարեանների գործունէութիւնը*, նշ. աշխ., 20:

գովսկին, ով մէկ տասնամեակից աւելի եղել էր միաբանութեան անդամ, վերը յիշատակուած իր գրքում գրում է, որ Մխիթարը որքան էլ թէեւ երբեմն կաթոլիկների ճնշման տակ գնացել է ուրոշակի զիջումների, սակայն, միեւնոյն է, Մխիթարեանները ձգտել ու աշխատել են պաշտպանել Հայաստանայց եկեղեցու եւ եկեղեցականների իրաւունքները, եւ բերում է բազմաթիւ օրինակներ⁵:

Մեր նպատակից դուրս է այն հարցը, թէ Մխիթարի՝ լուսաւորչական եկեղեցու սարկաւազից կաթոլիկ եկեղեցու նշանակալից դէմքի վերափոխուելը որքանով էր անկեղծ: «Կարելոյն այն է,- ինչպէս իրաւացիօրէն նկատում է Ժ. Քալանթարեանը,- որ Մխիթարը ձգտում էր ծառայել իր ազգին, իսկ ազգը նրա համար աւելի լայն հասկացութիւն էր, քան այս կամ այն կրօնը («գի հայ անունն որ ազգի անուն է եւ ոչ աղանդոյ»): Անկախ այն քանից, թէ ինչ դեր էր կատարում կրօնը Մխիթարի կեանքում, նրա հիմնական նպատակն ազգին ծառայելն էր»⁶:

Մենք համոզուած ենք, որ Մխիթարն ու Մխիթարեանները, չնայած նրան, որ ընդունեցին կաթոլիկութիւնը, իսկ հետագայում էլ իրենց վրայ ունեցան կաթոլիկ եկեղեցու ճնշումները, այնուամենայնիւ կարողացան պաշտպանել իրենց ինքնուրոյնութիւնը: Չէ՞ որ վերջապէս նրանք չարհամարհեցին հայ եկեղեցին, չծաւալեցին կրօնական հողի վրայ ազգը պառակտելու քաղաքականութիւն: Ինքը՝ Զօպանեանը, նկատում է, որ «այդ Հայերը, օտար եկեղեցիի մը յարելով հանդերձ- գոր արդէն իրենց օտար չեն համարիր, այլ՝ ըստ իրենց՝ բուն հայկականը, Լուսաւորչիքը,- իրենց ազգին լեզուին, աւանդութիւններուն, պատմութեանը եւ ապագայի երազներուն հարազատ պաշտպաններ կը մնան»⁷: Ճիշտ է նկատուած, որ թէեւ նրանց՝ կաթոլիկութեան դրօշի ներքոյ հանդէս գալը արդէն ենթադրում էր ինչ-ինչ զիջումներ, սակայն դրանք կրօնական, մարդկային բարոյականութեան ազդակող աւերումներ չէին: Նրանց նպատակը հայ ժողովրդին լուսաւորութեան ճանապարհով բարձրացնելն էր, եւ «Ժամանակը ցոյց տուեց որ Մխիթարեանները ոչ թէ կաթոլիկ քարոզիչներ էին, այլ կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի անխնայ մշակներ, որ հայոց համար դժուար

⁵ Անդ, 13:

⁶ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ Ժ., Հայ գրականագիտութեան պատմութիւն, Երևան 1988, էջ 146:

⁷ ԶՕՊԱՆԵԱՆ Ա., Մխիթար, ի Անահիտ, Փարիզ 1901, Բիւ 10-11, 252:

րին մի ժամանակաշրջանում կարողացան նպատակադրուել եւ իրագործել ժողովրդին կրթելու անուծելի խնդիրը»⁸:

Իր յօդուածում, ոգեւորուած Մխիթար Սեբաստացու ծաւալած ազգանուէր գործունէութեամբ, Ա. Զօպանեանը Մխիթարին համարում է Սահակի եւ Մեսրոպի արժանաւոր յաջորդը, նրանց պէս հերոս, ով իր հոգեկան քաջութեամբ ու մտքի կորովով հիմնադիրը դարձաւ «ամբողջ լոյսով շինուած գործի մը որ անցնելի է»: «Այդ կեանքը մին է մարդկութիւնը պատուող այն հոյակապ դիցազներգութիւններէն, ուր կը տեսնենք մարդ մը,- գրում է Զօպանեանը,- որ միս-միմակ, իր հոգեկան կորովէն ուրիշ ունէ միջոց ու զէմք չունենալով, ընկերական, քաղաքական, բնական բոլոր ուժերուն ընդդիմադրութիւնը կը նուաճէ եւ կը յաջողի ոչինչէն աշխարհ մը ստեղծել»⁹:

Մ. Նալբանդեանն էլ Մխիթարին եւ միաբանութեանը նըւիրուած իր անաւարտ «Մխիթար Սեբաստացի եւ Մխիթարեանք» յօդուածաշարում¹⁰ տպագրուած 1858ին, «Հիւսիսափայլ» ամսագրում¹¹, արժեւորում է արեւհօր գործը՝ ասելով, թէ հայկական դպրութիւնը վերստին բորբոքուեց այն կայծից, որ վառեց Մ. Սեբաստացին իր հանճարեղ մտքերի «ծննդականութեամբ»: Ներկայացնելով վերջինիս կեանքի ոգիսականը՝ Մ. Նալբանդեանը նրա նամակներից մեջբերուած քաղուածքներով հաստատում է Մխիթարի հայրենասիրական ձգտումները, որոնցից գերազույնն է եղել «հոգալ ազգի թէ՛ հոգելուր, թէ՛ իմացական պիտոյքը»։ «Նա հայկական դպրութեանը եւ լուսաւորութեանը գոհեց իւր հանգստութիւնը, իւր անձը մատնեց հազարաւոր նեղութիւնների, բամբասանքի եւ հալածանքի, չխնայեց մինչեւ անգամ իւր հայրենի կրօնը, որի մէջ ծնել ու մեծացել էր։ Այս բոլոր գոհողութիւնքը յանձն է առել նա հայկական դպրութեան համար...»¹²։ Սեբաստացու գործունէութեանը այդպիսի գնահատական տալուց յետոյ Մ. Նալբանդեանը, սակայն, իր խօսքում արտայայտում է խիստ տարօրինակ ու հակա-

8 ԱՍՈՅԵԱՆ, Թ., *Մխիթարեանների գործունէութիւնը*, նշ. աշխ., 14:

9 ԶՕՊԱՆԵԱՆ, Ա., *Մխիթար*, նշ. աշխ., 245:

10 Հասարական որոշ շրջանների դժգոհութիւնը յարուցելու հետեւանքով Մ. Նալբանդեանը որոշել է դադարեցնել իր աշխատանքի տպագրութիւնը տե՛ս ԱՍՈՅԵԱՆ, Թ., *Մխիթարեանների գործունէութիւնը*, նշ. աշխ., 14:

11 ՀՆԳՊ, Բ., Երեւան 1962, էջ 157:

12 ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Մ., *Նրկերի լիակատար ժողովածու*, Բ., Երեւան 1980, 238:

սական, անգամ անարդարացի դատողութիւններ Մխիթարի վերաբերեալ: Օրինակ, ինչպէս նկատում է Թ. Ասոյեանը, գնահատելով Սեբաստացու կամքը, յամառութիւնը, կայունութիւնն ու նուիրուածութիւնը՝ իր սկսած գործի նկատմամբ՝ Մ. Նալբանդեանը ոչ մի անգամ չի յիշատակում նրա անձնական ներդրումը հայագիտութեան ձեւաւորման ու զարգացման մէջ, զարմանալիօրէն շրջանցում է Մխիթարի լեզուագիտական գործունէութիւնը: «Ընդհակառակը, ամէն ինչ վերագրում է «Մխիթարեանց հոգաբարձութեանը», իսկ Մխիթարի մասին գրում է. «Ինքը՝ Մխիթարը, չէր կարող համարուիլ մեծ պտղաբեր հեղինակ այս վերստին նորոգութեան (խօսքը վերաբերում է գրաբարի ուսումնասիրութեանը Ա. Թ.), որովհետեւ նա չէր ստացել ոչ այն դաստիարակութիւնը եւ ոչ ունեցել էր ճանապարհի ուսումնասիրելու հիմ լեզուի յիշատակաւորութեան, որ նորա աշակերտը հետզհետէ ձեռք բերելով՝ սկսեցին ուսումնասիրել երկաթի համբերութեամբ ու անձամէք աշխատելով»: Ակնյայտօրէն Մ. Նալբանդեանը նսեմացնում է Սեբաստացու դերը հայ գրապատմական գործընթացում»¹³, իրաւացիօրէն եզրակացնում է գրականագէտը՝ գտնելով, որ որքան էլ թէեւ, ճիշտ է, Մխիթարը կանոնաւոր կրթութիւն չէր ստացել, ինչպէս իր յաջորդները, բայց շնորհիւ բնական օժտուածութեան սկիզբ դրեց գրաբարի մաքրմանն ու մշակմանը, բառարանագրութեանը, աշխարհաբարի քերականութիւնների ստեղծմանը եւ այլն:

Ի դէպ, աւելի ուշ՝ արդէն բանտարկութեան տարիներին, Պետրոպաւլովեան բերդում գրած «Սուրբ Մեսրոպի տօնին» բանաստեղծութեան մէջ Նալբանդեանը, փառաբանելով հայ գրերի եւ գրականութեան մեծ հիմնադրին, ամենակծու բառերով ծաղրում է Մխիթարեանների պատմութեանը վերաբերող այն տեսակէտը, «թէ Մեսրոպը հայ կուլտուրայի լոկ սկզբնաւորողն է, իսկ նրա իրագործողը Մխիթար Արքան»¹⁴:

Յո՛ւհա՛, ծթոած իմաստակներ,
Վասակի գարմ ուրացող,
Ո՞ւր ե՛ք նամադուլ քեհաբներ
Անում, որպէս հերձուածող:

Իբր. «Մեսրոպը պարտական է
Սըվագցի Մխիթարին»:

¹³ Ա.ՍՈՅԵԱՆ, Թ., *Մխիթարեանների գործունէութիւնը*, ԵՂ. աշխ., 17-18:

¹⁴ ՀՆԳՊ, Բ., 191:

Հացեկացին սկսել է,
 Բայց կատարել Սըվագցին»:
 Ընխի՛ն յաշիր, դու, այդ չբի,
 Տե՛ս, ինչ մեծ-մեծ է բրդում,
 Հոդս գլխիդ, ձեր ո՞ր գործի
 Համար այդպես էք խօսում¹⁵:

Այն, որ Մաշտոցի արածն իր նշանակութեամբ անգնահատելի է մեր ժողովրդի կեանքում եւ համեմատութեան եզր չունի, վիճարկման ենթակայ չէ, եւ անհրաժեշտութիւն չկայ այդ հարցին այստեղ անդրադառնալու: Այլ հարց է, թէ Մ. Նալբանդեանը որքանով է իրաւացի վարւում Մխիթարի ու Մխիթարեանների նկատմամբ՝ առնելով նմանօրինակ ծայրայեղ պահումա՞ք: Անդրադառնալով այս երեւոյթին՝ Հրանտ Թամրազեանը հաստատում է, որ Նալբանդեանի ընդհանուր վերաբերմունքը Մխիթարեանների նկատմամբ ունէր ընդգծուած բացասական միտում եւ դա բացատրում է հետեւեալ կերպ. «Մխիթարեանները գրադուած էին գերազանցապէս հայոց անցեալով, հին լեզուով, հին մատենագիտութեամբ: Նրանք օգտակար գործ էին անում, որի նշանակութիւնը թերեւս պէտք է երեւար աւելի ուշ, իսկ այդ օրերին, նորագոյն արուեստի համար մղուած պայքարի բովում Մխիթարեանների փաղափականութիւնը դառնում է կաշկանդող նոր ուժերի համար»¹⁶:

Այնուամենայնիւ Մխիթարեանների հանդէպ Նալբանդեանի դրսեւորած վերաբերմունքը միանշանակ բացասական չէ, աւելի շուտ այն բաւականին բարդ է ու հակասական, չնայած, պէտք է խոստովանել, յատկապէս Սեբաստացու նկատմամբ նրա դիրքորոշումը շատ դէպքերում դառնում է անարդարացի:

Ա. Զօպանեանը նոյնպէս շարադրում է Մխիթարի կեանքի դժուարին ուղին, նաեւ ներկայացնում միջավայրը՝ այդ զուգահեռի վրայ, սակայն, ի տարբերութիւն Նալբանդեանի, գնահատելով աբբա՛օր գրական, պատմական ժառանգութիւնը եւ վերջինիս նշանակութիւնը յաջորդների համար. «Մխիթար, Թեպետ կաթոլիկ, ամենէն Հայը եղաւ Հայերում»՝ իր ազգին լեզուն, պատմութիւնը, գրականութիւնը, ոգին ոչ միայն պահպանելու, այլ զարգացնելու,

15 ՆԱԼԲԱՆԳԵԱՆ, Մ., *Երկերի լիակատար ժողովածու*, Երեւան 1979, 117-118:

16 ԹԱՄՐԱԶԵԱՆ, Հ., *Հայ ֆնմադատութիւն*, Գիտք Գ., 19րդ դար, Երեւան 1992, 190:

ընդարձակելու, գեղեցկացնելու գործին մէջ իր ցոյց տուած եռանդովն եւ արտադրած արդիւնքովը»¹⁷: Մի հարցում, այնուամենայնիւ, Զօպանեանի տուած գնահատականը նոյնանում է Նալբանդեանի պնդման հետ, թէ Մխիթարի յաջորդները աւելի զարգացած ու զրազէտ եղան, քան իրենց միաբանութեան հիմնադիրը: Այդ հանգամանքը, սակայն, Զօպանեանը պայմանաւորում է ոչ այնքան նրանց անհատական կարողութիւններով, որքան այն միջավայրի ազդեցութեամբ, որտեղ հոգեւոր ու գիտական սնունդ ստացան նրանք. «Մխիթար «վանական» մըն էր ամէն բանէ առաջ, «Աստուծոյ նուիրուած մը», «եզմաւոր մը», - գրում է Զօպանեանը. - իր յաջորդները «արուեստագէտ-հայրենասէրներ եղան ամէն բանէ առաջ կամ գիտուններ: Մխիթարեան միաբանութիւնը այդ բանը կը պարտի, ոչ այնչափ Մխիթարին որչափ միջավայրին ուր դիպուածը գիրեմք մետեց: Վնեւտկի գեղարուեստական ու հայրենասիրական մթնոլորտն է որ հասցուց Զամէնեանները, Բագրատունիները, Հիւրմիւզները, Ալիշանները, Նարպէյները, Վիեննայի գիտական մթնոլորտն է որ կազմեց Քաթըրմեանները, Այտմեանները, Քարաֆաշեանները»¹⁸:

Զօպանեանի՝ վերը արտայայտած համոզմունքը, թէ «Մխիթար «վանական» մըն էր ամէն բանէ առաջ», «եզմաւոր մը», անշուշտ, տարակուսանք է առաջացնում, որ յօդուածի յետագայ շարադրանքում լրացում է երեւան բերուած հեղինակային այն մտքով, թէ Մխիթարի գործունէութեան առանցքը կրօնական-սխոյաւորիկ տարերքն էր: Սեբաստացու կրօնական գործին առաջնային տեղ յատկացնելու Զօպանեանական գնահատումը առաջին հայեացքից խիստ է հնչում: Սակայն, երբ վերադառնում ենք գրականագէտի՝ հարցի կապակցութեամբ դեռ երկու տարի առաջ արտայայտած այն նուրբ դիտարկմանը, թէ աբեահօր այդ կրօնական ջերմեռանդութիւնը պայմանաւորուած էր նաեւ ազգի բարոյական, հոգեւոր ուժերի վերականգնման ու զարգացման ազնիւ ձգտմամբ, ամէն ինչ կարծէք ընկնում է իր տեղը. «Կրօնաւոր մըն էր, - գրում է Զօպանեանը, - կրօնական գաղափարները դեռ մեծ տարածում ունէին իր ատենը, եւ իր գործունէութեան մէջ կրօնական ձգտումը բնականաբար ամենամեծ բաժինն ունի (ինչպէս Սահակի ու Մեսրոպի գործին մէջ)». բայց պետք չէ այդ համգամանքէն խաբուիլ. իր առաջին քայլէն իսկ կարելի է զգալ որ Մխի-

17 ԶՊԱՆԵԱՆ, Ա., *Մխիթար*, նշ. աշխ., 252:

18 Անդ., 255:

թարի գործը «գուտ կրօնական» չէր. Մխիթար կ'ուզեր ազգին *քաղաքական ուժը* նորոգել եւ բազմապատկել, ու կը հաւատար թէ կրօնական զգացման զարգացումը (եւ իր ատենը, Արեւելի մէջ մանաւանդ, միշտ էր այս գաղափարը) ամենակարեւոր սատարն էր այդ նպատակին հասնելու համար»¹⁹:

Ի հարկէ, *Զօպանեանի՝ Սահակի եւ Մեսրոպ Մաշտոցի գործունէութեան մէջ կրօնական տարրին ամենամեծ բաժինը յատկացնելու տեսակէտի հետ այսօր չի կարելի անվերապահօրէն համաձայնել*, սակայն *ասուածի մէջ, այնուամենայնիւ, ճշմարտութեան մաս կայ*: Իսկ Մխիթարի գործի կապակցութեամբ արուած գնահատականները միմեանց հակասող դատողութիւններով թերեւս յուշում են մի տխուր փաստ. այն, որ Մխիթարեան միաբանութեան գոյութեան բոլորման երկրորդ դարում դեռ պէտք էր խիստ զգուշանալ աբբահօր գործին միանշանակ ազգային ուղղութեամբ ինչ տալուց, քանի որ չէին դադարել Հռոմի առջեւ ամբաստանութիւնները, «հայկական էմբրիկները», Մխիթարեանների վերաբերեալ, թէ կաթոլիկութիւնը նրանց համար եղել է սոսկ դիմակ՝ իրենց գործունէութիւնը անվտանգ ծաւալելու համար: Կը նշանակի՝ Ա. Զօպանեանը զգուշացել է, չասենք, թէ վախեցել է Մ. Սեբաստացու գործունէութեան մէջ ազգային բովանդակութեանը հական եւ առաջնային տեղ յատկացնելուց: Այդ ենթադրութեան օգտին է թերեւս նաեւ Զօպանեանի հետեւեալ, շատ նրբօրէն արուած նկատառումը. «Մխիթար ամէն րանէ առաջ վանական մըն էր, բայց կրօնի ստրուկ մը չէր, քանի որ “ոչ ազգս կրօնիս կը գոհեմ, ոչ կրօնիս ազգիս” խօսքը գրած է, խօսք մը որ կ'ապացուցէ թէ իր բոլոր միստիֆականութիւնը զինքն չէր արգիլեր ազգին եւ կրօնին “տարբեր բաներ” ըլլալն ըմբռնել, եւ թէ ինքն արդէն ունէր խորապէս այն “ազգի սէրը” որ իր վանքին նշանաբանը պիտի ըլլար...»:²⁰

Գրական-գործնական իմաստով Զօպանեանը Մխիթարի ու նրա յաջորդների ամենամեծ երախտիքը տեսնում է նախ՝ նոր ժամանակներում արդի հայութեանը իր անցեալի հետ հաղորդակցութեան մէջ դնելու, յետոյ՝ հայ միտքը արեւմտեան քաղաքակրթութեան հետ անմիջականօրէն ու մշտապէս հաղորդակից դարձնելու գործի մէջ՝ մասնաւորապէս երկրորդը համարելով Մխիթարեանների ճշմարիտ փառքի տիտղոսը: Վենետիկի Մխի-

19 ԶՈՊԱՆԵԱՆ, Ա., *Վենետիկի Մխիթարեանները*, մշ. աշխ., 358:

20 Անդ., 256:

Թարեանների տան հիմնադրամ երկուհարիւրամեայ տօնի կապակցութեամբ գրած յօդուածում՝ վերնագրուած «Մխիթարի գործը» (1901), կարդում ենք. «Մխիթար եւ իր յաջորդներն ամէնէն մեծ սատարը եղած են արդի Հայութեան «եւրոպացումին»: Ոչ մէկ հայկական հաստատութիւն այնքան ինքնատիպ, այնքան խորունկ ու տեսական ազդեցութիւն մը չէ ունեցած Հայոց վրայ՝ արեւմտեան ոգիին, ֆաշակիին, բարբերուն մեր մէջ տարածման տեսակետով՝ որքան Մխիթարի տունը»²¹: Իր այս գնահատականով Զօպանեանը ասես դիմադարձում է Մ. Նալբանդեանին, ով, մի տեսակ նեղացնելով Մխիթարեանների արած գործի սահմանները, նրանց գործունէութեան խորհուրդը տեսնում էր ընդամէնը գրաբարի վերականգնանքի, հին դպրութեան վերականգման մէջ: «Առհասարակ այն ինքիբը, որ պիտի լուծանէր Մխիթարեանց միաբանութիւնը մեր հին դպրութեան հանդիսում, էր հին լեզուի լոկ պահպանութիւնը. ընդհանուր լուսաւորութիւն տարածել մեր ազգի մէջ, նորա գործը չէր, եւ նա բոլորովին ապարդիւն գտնուեցաւ»²², այսպիսի եզրակացութիւն է անում Նալբանդեանը, որ, անշուշտ, պատմականօրէն արդարացուած չէ: Զէ՞ որ հէնց Մխիթարեաններն էին, որ արդէն Նալբանդեանի ժամանակ՝ իրենց գոյութեան շուրջ 150 տարիների գոյութեան ընթացքում հրատարակած հարիւրաւոր գրքերով, գիտական էական նորութիւններով, պարբերական մամուլով, բացած դպրոցներով խոշոր ազդեցութիւն թողեցին մշակութապէս յետամնաց պայմաններում ապրող հայ ժողովրդի, մասնաւորապէս երիտասարդութեան վրայ: Նրանք իրենց գործունէութիւնը սկսեցին՝ մեր գրականութեանը տալով մեթոդիկ յատկութիւն, արեւմտեան մտածողութիւնն ու գեղեցկութիւնը ներմուծեցին հայ մատենագրութեան մէջ, ստեղծեցին հայերէնի առաջին կանոնաւոր քերականութիւնը, հայոց լեզուի բառարանները, պատմութիւնը, Հայաստանի աշխարհագրութիւնը, հրատարակեցին նախնեաց գործերը, Եւրոպայի դասական հրաշակերտները ծանօթացրին հայ ընթերցողին եւ վերջապէս, ինչպէս գրում է Զօպանեանը, «...ինքնագիր արտադրութիւններով Հայոց մէջ բանաստեղծական վերածնունդ մը յառաջ քերելու գործը

21 ԶՊԱՆԵԱՆ, Ա., *Մխիթարի գործը*, Եջ. աշխ., 195: Նոյն յօդուածը՝ «Մխիթարեանց գործը» վերատուրբեամբ, հրատարակուել է «Դեմքեր» գրքում. ԶՊԱՆԵԱՆ, Ա., *Դեմքեր*, Փարիզ 1924, 49-60:

22 ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Մ., *Նրկերի լիակատար ժողովածու*, Բ., Նրեւան 1980, 271:

կատարեցին յստակ ու լայն ծրագրով մը որուն պէս ոչ մէկ մտաւորական խումբ դեռ չէր ունեցած Հայոց մէջ՝ Հայկէն ի վեր»²³։ *Չնայած իր անվերապահ հիացման՝ այնուամենայնիւ կարծում ենք՝ Չօպանեանը, ի տարբերութիւն Նալբանդեանի, աւելի ճիշտ է ընկալել Մխիթարեանների գործունէութեան բովանդակութիւնը եւ նրա նշանակութիւնը հայ հասարակական կեանքում*։

Ուշագրաւ է, որ Չօպանեանը նախկինում գրած «Վեներտիկի Մխիթարեանները» յօդուածում (1899) Մխիթարեանների՝ եւրոպական դիւցազնական ոգու, ճաշակի, բարքերի իւրացման ձգտման մէջ տեսնում է մեր ժողովրդի ազատ ու ըմբոստ ոգու, գեղեցկութեան ու կեանքի անկաշկանդ պաշտումի ապացոյցը, հանգամանք, ուր ընդգծում է մեր ազգի բնապաշտ ու արեւաբաղձ կենսասիրական էութիւնը։ «Ամենէն նշանակալի քայլը գորտին այդ հայրենասէր արուեստագէտները (Մխիթարեանները՝ Վ. Ա.), լայնցնելը եղաւ մտաւորական արտադրութեան շրջանակը, գորտեր նախնիք բաց ի (մասամբ) խորեմացիէն, կրօնական, միստիֆական ազդեցութեան մէջ տարամերժօրէն սեղմած էին»²⁴, գրում է Չօպանեանը։ արուեստասէր ու դիւցազնական Խտալիան իր ոգին փոխանցեց մեր վանականներուն, եւ՝ արտասովոր երեւոյթ որ նոյն իսկ Եւրոպայի մէջ հագուադէպ է, եթէ ոչ անգոյ՝ այդ վանքի մարդիկը իրենց սքեմին տակ ունեցան ոչ թէ Ֆրանսուս տ'Ասիգի մը կամ Ս. Թոմաս Ագուինացիի մը հոգին, այլ Բեթարաբայիներ, Տանթէիներ, նոյն իսկ Թաստոյիներ... Պահելով հանդերձ կրօնական խորքը, որ իրենց էութեան հիմունքը կը կազմէր, այդ խորքին վրայ ասեղնագործեցին հայրենասիրութեան ու գեղեցկասիրութեան ամէնէն շքեղ ծաղիկները... «Աշխարհական» տարրը, «մարդկային» տարրը մտցուցին հայ գրականութեան մէջ, ամէն բանէ վեր դասեցին Գեղեցիկին սէրը, ըմբռնեցին եւ նոյն իսկ ընդգրկեցին հեթանոսական՝ իր գեղեցկութեանը համար»²⁵։

Ինչ խօսք, իրօք, շատ մեծ է Մխիթարի եւ նրա հետեւորդների խաղացած դերը մեր մշակոյթի պատմութեան մէջ։ Սակայն ինչ-որ տեղ, այնուամենայնիւ, Չօպանեանը չափազանցութեան մէջ է ընկնում, յատկապէս, երբ արդէ հայութեան

23 ՉՕՊԱՆԵԱՆ, Ա., *Մխիթարի գործը*, նշ. աշխ., 175։

24 Անշուշտ, այս հարցում Չօպանեանի հետ չի կարելի անվերապահօրէն համաձայնել, սակայն մեր նպատակից դուրս է այդ հարցի համգամանակից քննութիւնը, ուստի և սահմանափակում ենք միայն վերը ասուածով։

25 ՉՕՊԱՆԵԱՆ, Ա., *Վեներտիկի Մխիթարեանները*, նշ. աշխ., 359։

մտաւոր զարգացման գործում նրանց վերադրում է առաջատարի դեր: Այս Հանգամանքը ճիշտ է նկատել Կարլէն Դալլաքեանը. «Ըստ Զօպանեանի, - գրում է նա, - Մխիթարեաններն են ներշնչել եւ յարուցել նոր ժամանակների ազգային վերագրաբույժը թէ արեւմտահայութեան եւ թէ արեւելահայութեան մէջ: Ստացում է օրինակ, որ Զամչեանի «Հայոց պատմութեանը» միանգամայն... կը պարտինք ամէն ինչ, որ եմք այսօր...»: Այսօրն էր դեռ բաւական չէր, Զօպանեանը Զամչեանին համարում է «արդի հայութեան ստեղծող», միշտ է, Արովեանի հետ միասին»²⁶:

Անշուշտ, սխալում է Զօպանեանը: Մխիթարեանների պատմական ծառայութիւնն աւելի մեծ եղաւ ԺԸ. դարում եւ ԺԹ. դարի առաջին կէսին, մի տեւական ժամանակաշրջան, որ, իսկապէս էլ, առանց Մխիթարեանների կը մնար ամայի ինչպէս հոգեւոր, այնպէս էլ մասնաւորապէս գրական մտքի զարգացման իմաստով²⁷: Լէոն էլ, օրինակ, գտնում է, որ իր հիմնադրման օրուանից մինչեւ ի. դարու կէսերը Մխիթարեան միաբանութիւնը «միակ հիմնարկութիւնն էր, որ լոյս ու գիտութիւն էր մատակարարում հայերին»: «Մի անօրինակ բեղմնաւոր գրական գործունէութեամբ Սր. Ղազարի վամբը դարձաւ մի երեւոյթ, որի նմանը չէր տեսել մեր պատմութիւնը: Հայերը շատ տեղեր էին աշխատում ծաղկեցնել մայրենի գրականութիւնը, բայց ոչ մի տեղ չկարողացան հաւասարուել վեցնետիկի հայ կրօնաւորներին, որոնք երկար ժամանակ անյաղթելի եւ անկուսն տիտանների նման էին երեւում ազգի աչքին»²⁸, - գրում է նա:

Տասնիններորդ դարի երկրորդ կէսից սկսած, սակայն, ներանց դերը աստիճանաբար սկսեց նուազել, երբ գրականութեան մէջ առաջատար դերը փոխանցուեց աշխարհիկ չրջաններին, որոնք գրական գործն առաջ մղեցին՝ Մխիթարեանների Հնացած կաղապարների դէմ պայքարելով²⁹:

Այնուհանդերձ, տեղին է նշել, որ Զօպանեանը եւս անտես չի առել այս Հանգամանքը եւ յետագայում 1901ին գրած յիշեալ «Մխիթարի գործը» յօդուածում, կարծէք թէ վերանայելով իր

26 ԴԱԼԼԱՔԵԱՆ, Կ., Ա. Զօպանեան, Երեւան 1987, 203-204:

27 ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ, Ժ., Հայ գրականագիտութեան պատմութիւն, Երեւան 1988, 158:

28 ԼԷՈՅ, Երկերի ժողովածու, Ե., Երեւան 1986, 360:

29 ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ, Ժ., Հայ գրականագիտութեան պատմութիւն, Երեւան 1988, 399:

տեսակէտները, իրաւացի գնահատականներ է տալիս թէ՛ Մխիթարեաններին եւ թէ՛ արեւմտահայ ու արեւելահայ գործիչներին՝ «Անշուշտ, ըսել չեմ ուզեր թէ Մխիթարեանք ամէն բան ըրած են արդի Հայութեան վերակենդանացման մէջ, եւ թէ առանց իրենց՝ հայ ժողովուրդն այսօր բացարձակ խաւարին մէջ պիտի թաւալէր՝ իր անցեալին անգիտակ եւ իր լեզուն կորսնցուցած: Ոչինչ աւելի անախտօրէ՛ է արդէն քան փիւն ինքնահիացումը որով կարգ մը արդի պոետիկ Մխիթարեաններ հայ ազգութեան տարաւերժ ազատարարի եւ վերածննդի դերն իրենց տանը կը վերագրեն. հայ ժողովուրդը, տարօրինապէս նկուն, դիմացկուն եւ մշտակենդան, որ դարերէ ի վեր իր ինքնութիւնը պահած է՝ առանց Եւրոպայի մէջ կեդրոն մը ունենալու, անտարակոյս պիտի կարենար նորէն, նոյն իսկ առանց Մխիթարեաններուն, ուղղակի ազդուելով եւրոպական հոսանքէն որ այս դարուս ողողեց ամբողջ Արեւելքը, արթննալ իր բարոյական թմրութենէն, վերականգնել իր լեզուն եւ իր գրականութիւնը. բայց այդ զարթումը առանց Մխիթարեաններուն՝ աւելի դանդաղ պիտի ըլլար, վերականգնումի նիւթը աւելի խարխափուն, անստոյգ ու տաժանելի: Մխիթարի տունը դիւրացուց ու կանոնաւորեց հայ ազգին նիւթը,՝ եւ հոտ է իր արժանիքը:

Մխիթարեանց գործը շատ մեծ է,՝ *չարունակում է հեղինակը*,՝ բայց ամբողջ գործը չէ, անոնց հետ զուգահեռաբար, Պոլիս-Իզմիրի հայ լուսաւորչական մտաւորականներու գործունէութիւնը, եւ մանաւանդ ռուսահայ գործիչներու դերը, ահագին տեղ ունի արդի Հայութեան բարոյական վերականգնման մէջ»³⁰: *Ու թէեւ այս միտքը հեղինակը ընդարձակում ու մանրամասնում է յետագայ շարադրանքում, սակայն տարօրինակ ձեւով չուտով դարձեալ կրկին ընդգծում է Մխիթարեանների «առաջնութեան արժանիքը»՝ վերջիններիս վերապահելով «համատարած խաւարից» ընդհանուր հայուլթեան սթափեցման մենաշնորհը: Թերեւս Մխիթարեանների գործի նկատմամբ անվերապահ հիացման կանխակալութիւնն է Զօպանեանին մի պահ մոռացնել տուել իր իսկ կողմից արուած ճշմարտախոս գնահատականը՝ առաջ բերելով որոշակի հակասութիւն:*

Բոլոր դէպքերում, համեմատելով Վենետիկի Մխիթարեանների անցեալ գործունէութիւնը իր ժամանակաշրջանում ծաւալածի հետ, Զօպանեանը դեռ նախկինում ցաւով նկատել էր, որ միաբանութիւնը այլեւս չունի իր նախկին դիրքն ու հեղինա-

30 ԶՕՊԱՆԵԱՆ Ա., *Մխիթարի գործը*, նշ. աշխ., 178:

կուլթիւնը: «Վեցնտիկի վաճառքը իր հոյակապ ընթացքին մէջ օր մը յանկարծ կանգ առաւ, եւ այդ կասումը կը տեսնէ դեռ»³¹, - գրում է նա՝ անելով գրական-գործնական առաջարկութիւններ, որոնք իր կարծիքով յարմար կը գային Վեցնտիկի Մխիթարեաններին ու կը վերականգնէին նրանց նախկին հեղինակութիւնը:

Մի վերջին հանգամանք եւս: Զօպանեանի կողմից Մխիթարի ու Մխիթարեանների գործունէութեանն անդրադառնալը, այն էլ միմեանց յաջորդող տարբեր ուսումնասիրութիւններով, Մխիթարի արկածալից կենսագրութեան ու նրա՝ իր նպատակին հասնելու ձգտման մէջ գործադրած ջանքերի նկարագրութիւնը, կարծում ենք, մղուած չէր միայն հեղինակի գուտ բանասիրական հետաքրքրութիւնից: Թերեւս կար նաեւ մի այլ, ոչ պակաս էական խնդիր: Դարասկզբին հայութեան կեանքում ստեղծուած վըհատութեան օրերին, երբ, ինչպէս Զօպանեանն է գրում, «մեր նորագոյն սերունդէն իսկ կը լսեմք ձայներ որ մեր ժողովուրդը կ'ուզեն իր ծայրայեղօրէն «տկար» տարր մը ըլլալուն համոզել, որ չեն վարանիր Հայը ներկայացնել իբրեւ թոյլ ու լիկամ տիպար մը, «գործի մը սկսելէն առաջ իսկ վիատած», «անվնաս սահմանադուրքեան մը մէջ կ'ծկտած», «անձեռնդէտ», «խանութպան», «ստրուկ», «նախապաշարեալ», «տիրացու», եւն, օգտակար է որ մեր ժողովուրդին աչքին առջեւ դնենք պատկերը իրմէ բոլորս այն հօգի որ դէմքերէն մէկուն որոնց գոյութիւնը ինքնին կը բաւէ ապացուցանելու թէ Հայը՝ մեր նորածին յոռետեսներուն կարծածին նիշտ հակառակը՝ մեր երկրագունտին մամեւն ուժեղ ցեղերէն մէկն է, քանի որ ուժերուն աւելնէն թանկագինը, բարոյական ուժը ունեցած է»³²:

Այս համոզմունքից մղուած է ահա, որ Զօպանեանը ներկայացնում է ոչ միայն Մխիթարի գործը, այլեւ նրա կեանքի ու դիտականը: Գրականագէտը այդ մեծ հայրենասէրի կեանքն ու գործը իբրեւ խորհրդանիշ է առաջադրում նոր սերնդին՝ համոզուած, որ «Ազգ մը որ Մխիթարի պէս «նկարագիր» մը արտադրած է, իրաւունք չունի ինքիւմէ յուսահատելու»³³:

Այսպէս, ինչպէս տեսանք, Մխիթարի ու Մխիթարեանների մասին շատերն են գրել թէ՛ անցեալում եւ թէ՛ նոր ու նորագոյն ժամանակներում, եղել են ե՛ւ դրական, ե՛ւ բացասական գնահատականներ: Ու թէեւ դեռ այսօր էլ երբեմն Մխիթարեանների

31 ԶՕՊԱՆԵԱՆ, Ա., Վեցնտիկի Մխիթարեանները, Զ. աշխ., 365:

32 Անդ., 245:

33 Անդ., 256:

հասցէին հնչում են հակասական կարծիքներ, սակայն ժամանակի ընթացքում շատ բան ճշգրտուել է ու արժեւորուել: Եւ դրանում իր մեծ ներդրումն ունի անուանի գիտնական Արշակ Զօպանեանը, ով Միխիթարին ու միաբանութեանը նուիրուած իր մի քանի՝ միմեանց յաջորդող յօդուածներով ամենայն բարեխղճութեամբ ու պատասխանատուութեամբ, բազմաթիւ ճիշտ դիտարկումներով ներկայացրել է Աբբահօր եւ նրա հիմնադրած միաբանութեան հայանպաստ գործունէութեան դերն ու նշանակութիւնը մեր ժողովրդի կեանքում եւ պատմութեան համար: Իսկ եթէ նրա գնահատականներում երբեմն հանդիպում են ինչ-ինչ վիճարկելի մտքեր կամ հակասութիւններ, ապա դրանք պէտք է պայմանաւորել ինչպէս գիտնականի՝ միաբանութեան գործունէութիւնը երբեմն միայն պայծառ լոյսի տակ տեսնելու կանխակալութեամբ, այնպէս էլ ժամանակշրջանի հայ հասարակական-քաղաքական ու մշակութային կեանքի առանձնայատկութիւններով, ազգային կեանքի առջեւ ծառացած բազմաթիւ խնդիրների լուծմանը տուած կարեւորութեամբ:

ՎԱԶԱԳԱՆ ԱԻԱԳԵԱՆ

Summary

MEKHITAR AND THE MEKHITARISTS IN ARSHAG TCHOBANIAN'S VIEW

VACHAGAN AVAGYAN

In the present article, the author examines the evaluation of Mekhitar Sebastatsi and the Mekhitarists by the great literary critic Archag Tchobanian. For the first time, the study assesses the subject on a comparative basis, leaving aside the self-contained and self-sufficient ways of past scholarship. In particular, by comparing Tchobanian's views with previous assessments about the Mekhitarists, the author points out the exact and substantial way with which they characterize the role and significance of Abbot Mekhitar and his congregation for our nation's life and history. Today, on the 300th anniversary of the Congregation, it is argued that those views have both historic value and essential significance in terms of the academic evaluation of the Congregation's activity.